

վենետիկ հանդիպելու. ատոր փաստ կը ներկայանան ոչ միայն Հ. Ղուկասի խօսքերը կէս մը եղծուած, թէ «եկեալ ի վեներտիկ՝ դիմեալ առ Ս. Հայրապետ Հռոմայ», այլ նաեւ Ազգերեանի յայտնի վրկայութիւնը Չեռագրաց ցանկին մէջ՝ ուսկից մէջ բերենք վերեւ «առեալ ի քերական Տէր Արեւիկայի և այլոց»¹. Ղժբախտաբար ուրիշ յիշատակ չգտանք այդ մասին:

Ամբողջութեամբ պարզապէս անհայտ պիտի ըսենք թէ իբրեւ յականէ անուանէ յիշուած ականատես վկաներ և աղբիւրներ Դաւիթ բէկի պատմութեան կը ներկայանան

ՍՏԵՓԱՆ ԵԱՀՈՒՄԵԱՆ և
ՏԷՐ ԱՒԵՏԻՔ ՔԱՀԱՆԱՅ:

Թեւազորողներէն յետոյ իբրեւ զրի առնողներ և մեզի աւանդողներ այդ ազգային դիւցազնական էջերուն պէտք է երախտագիտութեամբ արձանագրենք Մխիթարեան Ուխտիա անունը՝ յանձին Հ. Ղուկասի որ ստոյգ է, և յանձին ուրիշներու որ անձանօթ կը մնան, և որոնց գործը շատ մեծ առաւելութիւններ ունի Հ. Ղուկասի գործին վրայ:

Յատուկ և խորին երախտագիտութեան արժանի սակայն Հ. Միքայէլ Չամչեան պատմահայրն է, որ մեծ արդիւնքն ունի Գուլամիրեանէ հարիւր տարիներ առաջ իր հսկայ հատորներու անմահ էջերուն մէջ զետեղած ըլլալուն համար այդ պատմական զրուակները, և թող մեր երախտագիտութեան փոքրիկ տրիտուրն ըլլայ գործը՝ որով ուզեցինք սրբել իր անուան վրայէն ստորին և անարգ զրպարտութիւնը՝ մոլեռանդի և խարդախողի:

Իբրեւ աւարտ կը հրատարակենք մեր խոստացած ներքոյ — քերթուածը Աւետիքի մասին՝ ժամանակակից Սահակ² անուն «յարգելի երեք» է մը, ինչպէս կ'աւանդեն մեր Մխիթարեան ձեռագիրները: Այդ ոտանաւորը այդ ձեռագիրներուն մէջ ալ իբրեւ

վերջաւորութիւն կը ներկայանայ. զետեղուած է անմիաբանութեան դէմ գրուած սրտցաւ տողերէ (որոնք Մխիթ. Բ. ձեռագրին և Գուլամիրեան մէջ միայն կը զրտնուին) և ռազմարեամի վրայ դերակատար մարտիկներուն նուիրուած ցանկէն վերջ՝ որ այսպէս կը սկսի «Այստեղի էին զօրավարք և զօրապետքն Դաւիթ պէկին» և հուսկ,

«Եւ Տէր Աւետիսն ի նոյն Հալիճոր՝ չորեքհարիւր (400) արամբ: Այս Տէր Աւետիս արար զրազում մեծամեծ քաջութիւնս, որպէս և ի պատմութեանս իսկ տեսանի, զի էր կարի քաջ, և արիասիրտ, և զօրաւոր յոյժ բանիւք, և գործովք, և վասն այսորիկ նա յորմէ հետէ հեռացեալ ի հայրենի երկրէն պանդխտեցաւ ի գաղատիայ, բազումք յորդորէին զնա ի հայրենի նորին գաւառէ անդրէն դառնալ առ նոսա և պաշտպանել զերկիրն զայն. բայց նա հրաժարէր յաղագս պատուոյ իւրոյ քահանայական կարգին որպէս և ոմն յարգելի էրեցանց անտի գրեաց առ նա զայս ստանաւոր առ նոյն յորդոր:

Ի նուագիլ հայոց ազգի,
ի դառն եւ նեղ ժամանակի:
յաղթօղ զօրեղ երեւեցար,
քաջ զինաւոր տէր Աւետիս:

Սարսին ի քէն ազգն տաճկաց,
զի յաղթեցեր նոցին զօրաց:
զարքայական զէնն Քրիստոս,
տէր Աւետիս քեզ պարգեւեաց:

Արիական զօրօք քոյին,
յաղթեցեր չար Գրիգորին:
զի ուրացաւ ըզՔրիստոս,
դու կտրեցեր գլուխ նորին:

Հասեր արագ բերդն Մեղրին,
սատակեցեր ըզԽարաճին:
երեսնհազար թուղթ Խարաճին,
այրեցեր ի մէջ կրակին:

Ազնիւ զօրօք քաջ եւ ընտիր,
ագուլեաց դաշտն ճէպէիր:
անարգողաց սրբոյ խաչին,
տէր Աւետիս վրէժնադիր:

Կրկին խնդրեմք արիանալ,
Պալի պէկին զինուորանալ:
Հայոց ազգին թեւ եւ թիկունք,
տէր Աւետիս բարեաւ երթաս:

Էրեցս ապիկար անարժան,
խնդրեմք սրբոյն համանգամայն:
խաչեալ Աստուած տէր իմ Յիսուս,
տէր Աւետիս քեզ պահապան:

Հ. ԵՂԻԱ ՓԵՂԵԿԵԱՆ

1. Գուլամիրեանի ձեռագրին մէջ Ս. Շահնուբեան և այլ ոմանք կը ներկայանան:

2. Տես ոտանաւորի տուներուն առաջին տողերու սկիզբը՝ ի Սահակի: